

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1516

# ԿՅԱՆՔ ՈՒ ՀԱՇԻՎ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՐՔ

ՈՒՍՏԱՆ Դ. ՏԱՐԻ

Կազմեց՝ Ա. ՇԱԳԱՐՃՅԱՆ

51  
Հ - 34

ՊԵՏԱՐԱՍ

1932

ՑԵՐԵՎԱՆ

04 MAY 2010

51  
C-34

28.

# ԿՅԱՆՔ ՈՒ ՀԱՇԻՎ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՐՔ

ՈՒՍՏԱՆ Դ. ՏԱՐԻ

Կազմեց՝ Ա. ՇԱՎԱՐԴՅԱՆ

9042  
10/0  
42798



1932

ՅԵՐԵՎԱՆ

## Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Հայտնի փաստ ե, վոր ուսման Գ. տարրում ընդհանրապես չի հաջող-  
վում լավ յուրացնել տալ ամբողջ թվերի լրիվ կուրսը, ուստի անհրաժեշտ  
ե դառնում հաջորդ խմբում միասոմանտակ շարունակել ամբողջ թվերի հետ  
կապված գործողությունների հիմնավորումը: Ահա այս հանգամանքը նկատի  
առնելով զբար առաջին մասն ընդդրկում ե ամբողջ թվերով գործողու-  
թյունները և սրանց վերաբերյալ որենքները:

Ծրագրի համաձայն ալյստեղ գլխավոր տեղը հատկացված է կոտորակ-ներին, առաջին հերթին տասնորդական կոտորակներին, ինչնելով թե մանկավարժական և թե կենսական անհրաժեշտության տեսակետից: Դ. խմբի մաթեմատիկայի ներկայում գործածվող ուսուական դասագրքերում կհանդիպեք հասարակ կոտորակների միայն գումարման ու հանման գործողություններին և մասով ամբողջը, ամբողջով մասը գտնելու դեպքերին: Բացակայում են բազմապատկման և բաժանման գործողությունները: Իմ կարծիքով դրա բացատրությունը կարող է լինել այն, վոր հասարակ կոտորակների բազմապատկման և բաժանման գործողությունների ըմբռնումը բավական դժվար է: Դ. խմբի յերեխաների համար, մյուս կողմից դրանց իմացությունը պակաս գործնական նշանակություն ունի, քան տասնորդական կոտորակներին: Չնայած դրան գրքում տեղ է տրված հասարակ կոտորակների բոլոր գործողություններին այն նկատառումով, վոր նամակ, կոլերիտ կամ այլ տիպի դպրոց մտնելիս Ա. աստիճանն ավարտողներից պահանջում է կոտորակների լրիվ կուրսությունը:

Կոտորակների — տասնորդական և հասարակ — յուրաքանչյուր գործողությունից հետո բերված ե զրա վերաբերյալ կանոնը։ Հավատացած ենք, այդ կանոնները կոգնեն աշակերտին հեշտությամբ լուրացնելու գործողությունները։

Թվաբանության կուրսին հյուսված են լեռկրաչափական շատ նյութեր՝ ուղղանկյուն, գուգահեռակողմ, զեղանկյուն, լեռանկյուն և դրանց մակերեսաներ գտնելը, բազմանկյուն, քիչան ու շրջանագիծ, մարմիններ՝ բուրգ, գլան, կոն, գունդ, սրանց գննումը, մակերեսույթն ու ծավալը. Յերկրաչափական նյութերի լուրացման հետ կապվում են շատ չափումներ, կառուցումներ, վորով աշակերտը բացի իմացողից դառնում և նաև գործող:

Դ. խմբի ուսման նյութը վերաբերութ և ԽՍՀՄ-ին-նրա արդյունաբերության, գյուղատնտեսության, սոց. շինարարության բազմազան խնդիրներին և այլն։ Համարյա այդ բոլոր թեմաները խնդիրների ձևով ընդգրկված են այստեղ, բացի մի յերկուսից, վորոնց համար ձեռքի առակ չեն ինչպես թվական տվյալները

Ամուր պահպանելով արդիականության սկզբունքը, աշխատել եմ թվականների քաղել այնպիսի աղբյուրներից, վրոնք վեարերում են հնգամյակի անցած, ներկա և հետագա տարիներին։ Ոգտագործած բազմաթիվ աշխատանքներից նշում եմ կարելքները. 1) Народное хозяйство СССР на пороге третьего года пятилетки и контрольные цифры на 1931 г., 2) Н. Баранский—«Краткий курс экономической географии» (общий обзор СССР в целом) вып. II 1930 г., 3) У. Погонин—«Химическая промышленность СССР в 1930 г. и первые пять лет» 1931 г., 4) С. Чеканов—«У. У. Ф. И. З. артиллерию и боеприпасы», 1930 г., 5) У. Фирсова—«У. У. Ф. И. З. физика и химия», 1930 г., 6) «Народное хозяйство Закавказья» журн. 1930 и 1931 г. г., 7) Календарь ежегодник коммуниста на 1931 г., 8) Ч. Уорин—«Лесные (лесоводство лесопиление)», 1931 г., 9) Уэлльз физик—«Физика и математика в природе», 10) Грацианский и Кавун—«Рабочая книга по математике» (сельский вариант) 1930 г., Ланков—«Первые шаги в математике» 1930 г., Зенченко и Эменов «Жизнь и знание в числах» (рабочая книга по математике для сельск. школы) 1930 г., проф. Козлов Н. И.—«Геометрия для сельской школы». 1924 г.

Ա. Շ.

Ոգուանու 1931 թ.

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱԶՄԱՆԻՇ ԹՎԵՐՈՎ

1. Պատրաստեցիք եկկեր և դպրոցի բակում խաղերի համար անջատեցեք ուղղանկյունաձև այնպիսի հրապարակ, վորի չերկարությունը լինի 60 մ., իսկ լայնությունը՝ 40 մ. (Հարկ լեղած դեպքում փոփոխեցեք թվերը հարմարեցնելով ձեր պայմաններին)։

2. Եկկերի միջոցով դպրոցի պարտեզը ցանկապատեցեք այնպես, վորության կյունաձև լինի։ Հաշվեցեք պարտեզի մակերեսը։

3. Ստուգեցեք եկկերով, թե դպրոցի բակի կամ բանջարանոցի, այդուղատերն իրար հանդիպելիս ուղիղ, սուր թե բութ անկյուն են կազմում։ Յեթե այդ պատերը հանդիպելով ուղիղ անկյուն են կազմում, ուրեմն, ինչ գերք ունեն դրանք իրար նկատմամբ։

4. Գծագրեցեք ուղիղ անկյուն և ստուգեցեք փոխադրիչով։ Ուղիղ անկյունը քանի աստիճան եւ։

5. Հաշվեցեք բանավոր։

$260 + 240$	$740 - 520$	$590 - 160$
$660 - 410$	$650 + 260$	$270 + 360$
$520 + 170$	$420 + 340$	$850 - 190$
$670 - 450$	$960 - 580$	$530 - 240$

$20 \times 7$	$40 \times 4$	$30 \times 6$
$120 : 6$	$160 : 4$	$180 : 6$
$160 : 8$	$40 \times 8$	$40 \times 9$
$20 \times 20$	$320 : 4$	$360 : 9$
$192 + 30$	$560 : 8$	$268 + 140$
$269 + 50$	$630 : 7$	$408 - 140$
$319 - 50$	$90 \times 6$	$408 : 8$
$406 - 36$	$90 \times 9$	$51 \times 8$




6. Կազմեցեք յերկարության և մակերեսի չափերի աղյուսակը։

1 կիլոմետրը	= մետրի
1 մետրը	= դեցիմետրի
1 դեցիմետրը	= սանտիմետրի
1 սանտիմետրը	= միլիմետրի
1 մետրը	= սանտիմետրի
1 մետրը	= միլիմետրի
1 քառ. մետրը	= քառ. դեցիմետրի
1 > դեցիմետրը	= քառ. սանտիմետրի
1 > սանտիմետրը	= քառ. միլիմետրի
1 > մետրը	= քառ. սանտիմետրի

1 պը = քառ. մետրի  
 1 հեկտարը = արի  
 1 հեկտարը = քառ. մետրի  
 1 քառ. կիլոմետրը = հեկտարի  
 1 քառ. կիլոմետրը = քառ. մետրի

7. Նկատի ունեցեք միքանի հողամասեր ներքեւ հասակագծերով,  
 կազմված 1 սանտիմետրին 50 մետր մասշտաբով: Ի՞նչպես կչափեք այդ հո-  
 ղամասերի մակերեսը.

Զոր աշխատանքը հեղտացնելու համար այդ հասակագծերը նախ վե-  
 րածեցեք փոքր ուղղանկյունների, ինչպես ցույց ե տրված տուաջինում:



8. Հնդունեցեք, վոր մի դպրոցական հողամասում ցանված բանջա-  
 րեղենների տեսքը հետևյալն ե:

Հցանված հողամաս	Պամիդոր
Կառավար	Լուր
Կառավար	Կառավար

Մասշտաբ:  
 1 սմ = 35 մ.

#### Վորոշեցեք.

ա) Ալդ բանջարեղեններից լուրացանցուրի տարածությունը:

բ) Հցանված հողամասի մակերեսը:

գ) Քանի անգամ ցանված մասն ավելի լի չցանվածից:

դ) Ալբող հողամասի տարածությունը:

Զ. Հաշվեցեք զրավոր.

$$2154 + 486 - 1967$$

$$4268 - 1273 + 395$$

$$139 \times 27 - 1066$$

$$72 \times 45 + 1570$$

$$317 \times 48 - 271 \times 35$$

$$403 \times 26 - 147 \times 36$$

$$7260 : 44 + 74 \times 125$$

$$89 \times 89 - 6400 : 100$$

$$476 + 674 - (1750 : 25)$$

$$56 \times 83 + (15184 : 4)$$

$$(67872 : 28) : (528 : 24)$$

$$79 + (4584 : 8) - 652$$

$$8112 : 4 + 134 \times 7$$

$$9816 - 748 + 5418 : 18$$

$$105 \times 19 - 96 \times 9$$

$$13536 : 32 + 32 \times 65$$

$$4752 + 2385 + 1367 \times 100$$

$$54 \times 246 : 9 : 9$$

$$18774 : 6 \times 16 - 25071$$

$$296 + 2960 : 4 \times 4$$

$$328 \times 83 - 463 \times 8$$

$$872 \times 19 + (10000 - 8888)$$

$$(80413 : 829) \times (1608 - 1539)$$

$$567 - (48951 : 777) \times 9$$

#### ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

10. 1928 թ. Խ. Միության աշնանացանի տարածությունը 38,300,000  
 հա լեռ, 1929 թվին խորհրդային տնտեսություններն ավելացրին 280,000 հա,  
 կոլտնտեսությունները՝ 826,000 հա, իսկ անհատական տնտեսությունները՝  
 1,500,000 հա: Ի՞նչ տարածություն եր բռնում աշնանացանը 1929 թ.:

11. 1928 թ. Խ. Միության ամբողջ ցանքերի տարածությունը 115,600,000  
 հա լեռ, իսկ հնդամակալի վերջին տարում կինը 141,000,000 հա: Միջին հաշ-  
 վով տարեկան վնասը ավելանալու Խ. Միության ցանքերի տարածու-  
 թյունը հնդամակալի ընթացքում:

12. 1927 թ. Անդրկովկասի ցանքերի ընդհանուր տարածությունը 2,133,000 հա էր, ի կ հնգամյակի վերջին տարում՝ 1932/33 թ. կլինի 2,700,000 հա: Միջին հաշվով տարեկան վճրքան և ավելանալու ցանքերի տարածությունը հնգամյակի ընթացքում:

13. Անդրկովկասի ցանքերի տարածությունն ավելանալու ին 295000 հա անջրդի հողերը վոռոգելով, 30000 հա ճահճները չորացնելով, մնացածն և անջրդի հողերը վոռոգելով, 40000 հա ճահճները չորացնելով, հնգամյակի վորջին տարեկան միջին ալժմ խոպան մնացած հողերի մշակումով: Հնգամյակի վորջին տարում քանի հեկտար խոպան հողեր մշակված կլինին Անդրկովկասում:

14. 1929—30 թ. Անդրկովկասի աշնանացանի և գարնանացանի տարածությունը հետևյալն էր.

(Հեկտար)

Մ Ը Ա Կ Ո Ւ Յ Թ	Ա Ն Դ Ր Կ Ո Վ Կ Ա Ս	Ա Դ Ր Բ Ե Ջ Ա Ն	Հ Ա Տ Ա Ս Մ Ա Ն	Վ Ր Ա Ս Մ Ա Ն
Հացահատիկ . . .	2 146,523	945200	336000	865323
Բանջարեղեն . . .	83519	37100	23430	22969
Ցանած խոտ . . .	37370	15200	10000	12770
Տեխն. բույսեր . .	264,093	167780	28190	68123
Վորից բամբակ .	185,000	150700	20000	14300

Կազմեցեք ինդիրներ, այս աղյուսակի թվերը համեմատելով վերևու ինդիրների թվական տվյալների հետ:

15. Իմացեք անհայտ թիվը.

$$x+1794=8901$$

$$14536+x=18006$$

$$x-17516=805$$

$$21893-x=6035$$

$$x \times 84=14168$$

$$714 \times x=7854$$

$$x : 45=2341$$

$$6840 : x=152$$

$$x+7416 \quad 5132=2285$$

$$x \times 25+7550=15800$$

$$4752-3609+x=2500$$

$$172 \times x - 5115=2281$$

$$5473+x-318=5802$$

$$43414 : x+991=4092$$

$$x+14037-8004=7580$$

$$1096+62042 : x=2191$$

$$(1637 + 5891) : 4$$

$$46 - (2560 : 128)$$

$$x : (7 \times 9) = 75$$

$$(428 \times x) : 48 = 107$$

16. Բերքի առաջարկությունը կախված է վոչ միայն ցանքի տարածությունից, այլև սերմացվի վորակից, ցանելու յեղանակից, դյուզատնտեսական գործիքներից ու մեքեռանորից, հողի պարարտացումից և այլն:

Հայաբույսերի 100 կտ սերմացվի մեջ գտան 3 կտ փշացած հատիկներ,

$1 \frac{1}{2}$  կտ քար, 2 կտ մոլախոտերի հատիկներ և  $3 \frac{1}{2}$  կտ փոշի: 100 կտ հացահատիկից վճրքանն եր մաքուր սերմացուն:

17. Մի հեկտար հողամասում սովորապես ցանում էն 150 կտ հացահատիկ:

Վարդան կլինի 200 հա ցորենի բերքը, յեթե մի դեպքում ցանեն զտված, միւս դեպքում՝ չզտված սերմացու, այն խառնությունը, վոր հիվեց նախկին խնդրում:

Բերքը հաշվեցեք մեկին 8:

18. Սերմազուչ մեքենան 1 ժամում մաքրում է 500 կտ հացահատիկ: 400 հեկտար տարածության համար պահանջվող սերմացու և վարդքան ժամակում կմաքրի 3 մեքենան, աշխատելով որական 10 ժամ:

19. 1 հա շարքացանին գնում և 1:0 կտ սերմ և բերք ստացվում ամենաքիչը մեկին 8, իսկ 1 հա շարքացանին գնում և 160 կտ սերմ և ստացվում մեկին 5, վարդքան կլինի բերքի տարբերությունը 150 հեկտարից շարքացանին և շարքացանի դեպքում:

20. Զեր շրջանի խորհրդակին կամ կրլեկտիվ տնտեսություններից տեղեկացեք շարքացանի առավելությունների մասին: Իրական թվերով կազմեցեք լուղիք շարքացանի առավելությունն ապացուցելու:

21. Շարքացան մեքենան 1 հեկտարին տնտեսում է 32 կտ սերմ և բերքն ավելացնում մինչեւ 200 կտ: Տարեկան վարդքան և մի շարքացան մեքենայի ոգուացը, յեթե նա սերմում է մինչեւ 75 հա հողայուս:

22. Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները 1924 թ. ունելին 6 միլիոն, իսկ 1928 թ. 10 միլիոն ձիու ուժի տրակտորներ, Խորհրդակին Միությունը 1930 թ. ուներ 900,000, իսկ 1931 թ. կունենա 2,065,000 ձիու ուժի տրակտոր:

Միջին հաշվով տարեկան քանի ձիու ուժի տրակտոր և ավելացել Միացյալ Նահանգներում 1924—1928 թվերին և և. Միության մեջ միայն մի տարում:

23. 20 ձիու ուժի տրակտորն ամրող սեղոնում աշխատելով 120 որ, տրակտուն 2 նվազ, վարում և 3 հա մի նվազում: Ըստ մինչեւ գանի հեկտար կվարի 5 տրակտորը, հավասար աշխատելով ամբողջ սեղոնում:

24. 20 Ձիու ուժի տրակտորն արժե 1980 որ, Գնելիս վճարում են արժենքի  $\frac{1}{4}$  որ, մնացածն ել 6 տարում: Տարեկան վարդքան և վճարվում:

25. ԽՍՀՄ շատ տարածված է «Ֆորդոն» սիստեմի տրակտորը, վորը զեղիկավորում և 1 արակտորիստ և փօխարինում 10 գութանավորի, իսկ տրակտորը՝ 10 ձիու:

Տեղիկացեք այդ տրակտորի և մի ձիու ու գութանավորի որական ծախսը և պարզեցեք տրակտորի առավելացները գութանից:


26. 1 հա տարածության հացահատիկի արարը ձեռքի մանգաղով կարուի յե հնձել 70 ժամում, գերանդիով 20 ժ., իսկ հնձող կապող ձեռքաշնչնայով՝ 4 ժ..

Տեղիկացեք մի հնձորի որական ծախսը և հաշվեցեք՝ վիճը և ավելի ձեռնտու, ձեռքի թե մեքենայի ախատանքը:

27. Խրձկապ տրակտորը մի որում հավաքում և 10 հա ցանք, դա նշատիկ մի վրձկապ տրակտորը 3 անգամ ավելի արտադրողականու-

թիւն ունի, քան ձիաքաղ խրձկաղ մեքենան և 50 անգամ ավելի, քան հնձվորը, վոր գործում և մանգաղով:

Եեթե հնձվորը 1 հա ցանքը հնձի 60 ժամում, որական 10 ժամ աշխատելով և 4 ո. որավարձ ստանալով՝ ապա քանի անգամ խրձկաղ տրակտորի աշխատանքը կլինի եժան և արագ:



Դկ. 1. Կոմբայն

**28.** Կոմբայնը, վոր հնձող և կալսող մեքենայի բարդությունն ու կատարելագործությունն ե, 10 ժամում կարող ե մինչև 20 հա հացահատիկի արտը կալսել Այդ մեքենան բացի տրակտորիստից պահանջում ե 2-3 բանվոր, մինչդեռ խրձկաղ և կալսիչ մեքենաներով այդ տարածության արտը կալսելու համար անհրաժեշտ ե 20 բանվոր: Վարոշեցեք կոմբայնի առավելությունները — եժան և արագ տշխատանքը:

**29.** Կոմբայնը 10 ժ. աշխատելով արտադրում ե 8 տոնն հացահատիկ, իսկ նույնքան ժամանակում ձեռքով աշխատելիս՝ 1 ցենտներ:

Քանի անգամ կոմբայնն արագ և աշխատում մարդուց:

**30.** Կոմբայնն արժե 4500 ռուբլուց մինչև 6000 ռ. Զնալած թանգության, դա տվելի ձեռնուու յե, քան խրձկաղ և կալսիչ մեքենաները, կոմբայնով 9 ց բերք տվող 1 հա արտը կալսելիս ծախս ե նստում 4 ռ. 75 կ., իսկ մլուս մեքենաները 9 ռ. 75 կ.:

Քանի հեկտար հացարուկսեր կալսելով կարելի կլինի այդ մեքենաների համեմատությամբ տված ոգուտով ծածկել կոմբայնի արժեքը, ընդունելով դա 5000 ռ.:

**31.** Կալսող մեքենայով 1 ց ցորեն ստանալիս ծախս ե լինում 1 ռ. 9 կող.՝ 63 հա արտը կալսելիս վմրածն դրամ կխնալիք, յեթե փոխանակ այդ մեքենաի բանեցնենք կոմբայն՝ (տես նախորդ խնդիրը):

### ՄԵՔԵՆԱ-ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐ

**32.** 1931 թ. ԽՍՀՄ մեքենա-տրակտորային կայանների թիվը 1400 եր 980,000 ձիու ուժի տրակտորներով: Այդ կայանների թիվը 4000-ի համեմով կը ավարտարվի և. Միության գյուղատնտեսությանն անհրաժեշտ տրակ-

տորալին կարիքը: Քանի ձիու ուժի պետք ե հասնեն մեքենա-տրակտորացին կայանները:

**33.** Մեքենա-տրակտորային կայանները հիմնելուց հետո վարելահողերի ու բերքի չափը մեծացավ: 20 հա վարելահողից

	Մինչև մեքենա-տրակտոր կայանները	Մեք. տրակտոր. կայանների հիմնելուց հետո	Տրամերությունը
Ցանվում եր .	11 հա	17 հա	
Բերքը 1 հեկտարից	8 ց	12 ց	
Հնդհ. բերքահավաք	63 ց	129 ց	

Հաշվեցեք 150 հա ցանքի ընդհանուր բերքատվությունը մեքենա-տրակտորային կայաններ հիմնելուց առաջ և հետո:

**34.** Մինչև մեքենա-տրակտորային կայաններ հիմնելը չքավոր գյուղացին կուլակից եր վերցնում հողամշակման գործիքները, անստունական սերմացուն, վճարելով աշնանալին և գարնանալին բերքի  $\frac{1}{3}$ -ը և վերադաշներով ստացած սերմացուն:

2 հա ցորենի ցանքից ինչ կմնար գյուղացուն, յեթե 1 հա հողամատում ցանվում եր 170 կգ և ստացվում մոկին 6:

**35.** ԽՍՀՄ գյուղատնտեսությունը բարձրացնելու համար գնված և գործության դրված մեքենաների ու գործիքների արժեքը.

1926/27 թ. . . . : . . . 988500 ռ.

1927/28 թ. . . . : . . . 1073800 ռ.

1928/29 թ. . . . : . . . 1403800 ռ.

Կազմեցեք գիագրամ ընտրելով հարմար մասշտաբ:

**36.** 1930 թ. Անդրկովկասում գործում ելին 5 տրակտորակայաններ, վրունք վարեցին 39820 հա հող, յուրաքանչյուր տրակտորը՝ 110 հա: Միջին հաշվով քանի տրակտոր կար այդ կայաններից յուրաքանչյուրում:

**37.** Անդրկովկասի մեքենա-տրակտորային կայս նները 1930 թ.

Վ Ո Ր Տ Ե Ղ	Քանի տրակտոր	Քանի ձիու ուժ	Մշակութ	Գարնան վարակությունը (10 ձիու ուժ)	1 տրակտ.
ԱԴՐԲԵՅԱՆ					
Բարդա . . .	83	930	բամբակ	12600	135
Դայլ-Մահմեդ-	60	600		7120	120
լու . . . .					
ՎՐԱՍՏԱՆ					
Սանգար . . .	54	610		4640	76
Արաշա . . .	40	400	բեղիպատ.	—	—
ՀԱՅԱՍՏԱՆ					
Սարգսարաբատ	74	830	բամբակ	8360	101
	311	3370		32720	431

Կաղմեցեք խնդիրներ.

38. Անդրկովկասում 1930/31 թ. մեքենա-տրակտորային կայանների գործացումը պետք է ուսնենա հետեւալ պատկերը,

Վ Ո Բ Տ Ե Ղ	Քանի կայան	Քանի ձիռւ ուժ	Քանի հեկտար պիտի վարի
Աղբեջան . . . .	12	15950	387,300
Հալաստան . . . .	6	4800	132,000
Վրաստան . . . .	9	9500	215,000
Հնդամենը	27	30250	734,300

Այս աղյուսակի թվերը համեմատեցեք նույկին խնդրի տվյալներին և կաղմեցեք խնդիրներ:

39 Եքսկուրսիա կատարեցեք ձեր մոտակա մեքենա-տրակտորային կամ դեպի խորհ. դաշին, կոլեկտիվ տնտեսություն՝ ծանոթանալու դրա ուսնեցած զբաղանական մեքենաներին ու գործիքներին, նրանց տիխատանքի չափին ու վսրակին, արժեքին և այլն: Այդ տվյալներով կազմեցեք խնդիրներ:

#### ԳՈՒՄԱՐԻ ՅԵՎ ՄՆԱՑՈՐԴԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

$$40. 726 + 1448 = 2174$$

Այս գումարելիներից առաջինը մեծացնենք 200-ով, կստանանք 926+ + 1448 = 2374.

Ի՞նչ փոփոխություն կրեց գումարը:

Առաջին գումարելին թողնենք առփոփոխ, իսկ յերկրորդը մեծացնենք 200-ով, կստանանք 726 + 1648 = 2374

Ի՞նչ փոփոխություն կրեց գումարը:

200-ով մեծացնենք թե առաջին և թե յերկրորդ գումարելիները, կստանանք 926 + 1648 = 2574

Ի՞նչ փոփոխություն կրեց գումարը:

Ուրեմն, գումարի մեծանալու որենքը վ՞ե՞ն ե:

$$41. 828 + 2428 = 3256$$

Առաջին գումարելին փոքրացնենք 300-ով, կստանանք 528 + 2428 = = 2956

Ի՞նչ փոփոխություն կրեց գումարը:

Առաջին գումարելին թողնենք առփոփոխ, 300-ով փոքրացնենք յերկրորդ գումարելին, կստանանք 828 + 2128 = 2956.

Ի՞նչ փոփոխություն կրեց գումարը:

300-ով փոքրացնենք թե առաջին և թե յերկրորդ գումարելին, կստանանք 528 + 2128 = 656.

Ի՞նչ փոփոխություն կրեց գումարը:

Ուրեմն, գումարի փոքրանալու որենքը վ՞ե՞ն ե:

42. Առանց գրավոր հաշվելու միանգամից առացեք ներքեւ թվերի գումաւում:

$$\begin{array}{r} 3416 + 1052 = 4468 \\ + 300 \\ \hline \end{array}$$

$$\begin{array}{r} \dots . 3716 + 1052 = \dots \\ 3416 + 1052 = 4468 \end{array}$$

$$\begin{array}{r} 3416 + 1052 = 4468 \\ - 300 \\ \hline \end{array}$$

$$\begin{array}{r} \dots . 3116 + 1052 = \dots \\ 3416 + 1052 = 4468 \end{array}$$

$$\begin{array}{r} 3416 + 1052 = 4468 \\ + 300 + 300 \\ \hline \end{array}$$

$$\begin{array}{r} \dots . 3716 + 1352 = \dots \\ 3116 + 752 = \dots \end{array}$$

$$\begin{array}{r} 3416 + 1052 = 4468 \\ - 300 + 300 \\ \hline \end{array}$$

$$\begin{array}{r} \dots . 3116 + 1352 = \dots \\ 3116 + 1252 = \dots \end{array}$$

$$43. \text{ա. } 6858 - 2516 = 4342$$

Նվազելին մեծացնենք 600-ով կստանանք՝ 7458 - 2516 = 4942

Ի՞նչ փոփոխություն կրեց մնացորդը:

Հանելին մեծացնենք 600-ով, կստանանք՝ 6858 - 1916 = 4942

Ի՞նչ փոփոխություն կրեց մնացորդը:

600 ով միաժամանակ մեծացնենք նվազելին ու հանելին կստանանք՝ 7458 - 3116 = 4342.

Ի՞նչ փոփոխություն կրեց մնացորդը:

43. թ. Նվազելին փոքրացնենք 400-ով, կստանանք 6458 - 2516 = 3942

Ի՞նչ փոփոխություն կրեց մնացորդը:

Հանելին փոքրացնենք 400-ով կստանանք՝ 6858 - 2116 = 4742

Ի՞նչ փոփոխություն կրեց մնացորդը:

Նվազելին և հանելին միաժամանակ փոքրացնենք 400-ով, կստանանք՝ 6458 - 2116 = 4342

Ի՞նչ փոփոխություն կրեց մնացորդը:

Ուրեմն, մնացորդի փոփոխելու որենքը վ՞ե՞ն ե:

44. Ասացեք մնացորդն առանց գրելու:

$$\begin{array}{r} 6498 - 3253 = 3245 \\ + 500 \\ \hline \end{array}$$

$$\begin{array}{r} \dots . 6998 - 3253 = \dots \\ 6498 - 3253 = 3245 \end{array}$$

$$\begin{array}{r} 6498 - 3253 = 3245 \\ + 500 + 500 \\ \hline \end{array}$$

$$\begin{array}{r} \dots . 6998 - 3753 = \dots \\ 5998 - 3253 = \dots \end{array}$$

$$\begin{array}{r} 6498 - 3253 = 3245 \\ - 500 \\ \hline \text{q. } 6498 - 2753 = \dots \end{array}$$

$$\begin{array}{r} 6498 - 3253 = 3245 \\ - 500 - 500 \\ \hline 5998 - 2753 = \dots \end{array}$$

$$\begin{array}{r} 6498 - 3253 = 3245 \\ - 200 + 400 \\ \hline \text{q. } 6298 - 3653 = \dots \end{array}$$

45. Խորհրդային Միության ցանքերի բերքատվությունը լեզու և առևտությունը (8եւտաեր)

Մ Շ Ա Կ Ո Ւ Ց Թ.	1928 թ.	1929 թ.	1930 թ.	1931 թ.
Հաշաբույսեր . .	733,200,000	717,400,000	873,600,000	976,600,000
Բամբակ-նումք . .	8,215,000	8,640,000	13,463,000	21,018,000
Վուշ . . . .	3,238,000	3,606,000	4,286,000	5,682,000
Շաք-ը ճականեղ	101,430,000	62,478,000	151,696,000	214,365,000
Զիթաբույսեր . .	33,948,000	30,052,000	31,239,000	51,999,000

Կազմեցեք խնդիրներ, շեշտելու բերքի աճումը տարեզտարի:

46. Անդրկովկասում հնգամյակի տարում բամբակի բերքը 249,600 տ. եր, իսկ հնգամյակի վերջին կլինի 763,000 տ.:

Մոտավորապես քանի անգամ կմեծանա բամբակի բերքատվությունը այս հնգամյակում:

47. Հնգամյակի վերջին տարում Անդրկովկասում ծխախոտի ցանքերի տարածությունը լինելու յե 21900 հա, հեկտարին 1 տ բերք, վորից 5500 տոննը մնալու յե Անդրկովկասի, 8400 տ՝ միութենական արդյունաբերության համար, մնացածն ել արտածվելու յե, Վարդքան և արտածվելու:

ԱՐՏԱԴՐՅԱԼԻ ՑԵՎ ՔԱՆՈՐԴԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

$$156 \times 12 = 1872$$

48. Բազմապատկելին մեծացնենք 4 անգամ, կստանանք  $624 \times 12 =$   
= 7488:

Ի՞նչ փոփոխություն կրեց արտադրյալը:  
Բազմապատկելին մեծացնենք 3 անգամ, կստանանք  $156 \times 36 =$   
= 5616.

Ի՞նչ փոփոխություն կրեց արտադրյալը:  
Բազմապատկելին և բազմապատկելու կամ արտադրիչները միաժամանակ մեծացնենք 5 անգամ, կստանանք  $780 \times 60 = 46800$ :

Ի՞նչ փոփոխություն կրեց արտադրյալը:  
Ուրեմն, արտադրյալը մեծանալու որենքը վերն ե,  
49. Բազմապատկելին փոքրացնենք 4 անգամ, կստանանք  $39 \times 12 =$   
= 468.

Ի՞նչ փոփոխություն կրեց արտադրյալը:  
Բազմապատկելիը փոքրացնենք 6 անգամ, կստանանք  $156 \times 2 = 312$   
Ի՞նչ փոփոխություն կրեց արտադրյալը:  
Բազմապատկելին և բազմապատկելու միաժամանակ փոքրացնենք 3  
անգամ, կստանանք

$$52 \times 4 = 208$$

Ի՞նչ փոփոխություն կրեց արտադրյալը:  
Բազմապատկելին մեծացնենք, իսկ բազմապատկելու փոքրացնենք 2  
անգամ, կստանանք  $312 \times 6 = 1872$ :  
Ի՞նչ փոփոխություն կրեց արտադրյալը:  
Բազմապատկելին փոքրացնենք, իսկ բազմապատկելու մեծացնենք 2  
անգամ, կստանանք  $78 \times 24 = 1872$

Ի՞նչ փոփոխություն կրեց արտադրյալը:  
Բազմապատկելին մեծացնենք 2 անգամ, իսկ բազմապատկելու փոքրացնենք 4 անգամ, կստանանք  $312 \times 3 = 936$   
Բազմապատկելին փոքրացնենք 4 անգամ, իսկ բազմապատկելու մեծացնենք 2 անգամ, կստանանք  $39 \times 24 = 936$

Այս 2 դեպքերում ի՞նչ փոփոխություն կրեց արտադրյալը:  
Ուրեմն արտադրյալի փոփոխվելու որենքը վերն ե:

50. Բազմապատկելին 824 ե, բազմապատկելու 16: Ի՞նչ փոփոխություն կկրի արտադրյալը, ի՞թե

- ա) բազմապատկելին մեծացնենք 2 անգամ
- բ)      »      փոքրացնենք 4      »
- գ) բազմապատկելու մեծացնենք 3 անգամ
- դ)      »      փոքրացնենք 8      »
- յ) 2 արտադրիչներն ել մեծացնենք 4      »
- զ)      »      փոքրացնենք 4      »
- ե) Բազմապատկելին փոքրացնենք,  
իսկ բազմապատկելու մեծացնենք 2      »

$$5376 : 24 = 224$$

51. Բաժանելին մեծացնենք 2 անգամ, կստանանք  $10752 : 24 = 448$   
Ի՞նչ փոփոխություն կրեց քանորդը:

Բաժանարարը մեծացնենք 4 անգամ, կստանանք  $5376 : 96 = 56$

Ի՞նչ փոփոխություն կրեց քանորդը:  
Բաժանելին ու բաժանարարը մեծացնենք միաժամանակ 3 անգամ,  
կստանանք  $16 : 28 : 72 = 224$

Ի՞նչ փոփոխություն կրեց արտադրյալը:

52. Բաժանելին փոքրացնենք 4 անգամ, կստանանք  $1344 : 24 = 56$   
Ի՞նչ փոփոխություն կրեց քանորդը:

Բաժանառարը փոքրացնենք 4 անգամ, կստանանք  $5376 : 6 = 896$   
Ի՞նչ փոփոխություն կրեց քանորդը:

Բաժանելին ու բաժանարարը միաժամանակ փոքրացնենք 12 անգամ,  
կստանանք  $448 : 2 = 224$

Ի՞նչ փոփոխություն կրեց քանորդը:

Բաժանելիս մեծացնենք 4 անգամ, իսկ բաժանարարը 2 անգամ,  
կստանանք  $21504 : 48 = 448$

Ի՞նչ փոփոխություն կրեց քանորդը:  
Բաժանելին փոքրացնենք 8 անգամ, իսկ բաժանարարը մեծացնենք 4  
անգամ, կտանանք  $672 : 8 = 7$

Ի՞նչ փոփոխություն կրեց քանորդը:  
Ուրեմն, քանորդի փոփոխվելու որենքը վորոն ե:

53.	Ի՞նչ փոփոխություն կրի քանորդը, յեթե
ա)	Բաժանելին մեծացնենք 4 անգամ
բ)	» փոքրացնենք 6 »
գ)	Բաժանարարը մեծացնենք 3 »
դ)	» փոքրացնենք 8 »
յի)	Բաժանելին և բաժանարարը միաժամանակ մեծացնենք 5 »
զ)	» փոքրացնենք 2 »
ե)	Բաժանելին մեծացնենք, իսկ բաժանարարը փոքրացնենք 10 »
ը)	Բաժանելին փոքրացնենք, իսկ բաժանարարը մեծացնենք 12 »
թ)	Բաժանելին մեծացնենք իսկ բաժանարարը 4 »

### ԾԱՎԱԼԻ ՑԵՎ ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ԶԱՓԵՐ

54. Ստվարաթղթից պատրաստեցեք խորանարդածել լիտր, մի կողմը  
բաց, ներսից պատերին քսեցեք հալած մոմ, վորից հետո կարելի յի ջուր ածել  
ալդտեղ: Լիտրն ի՞նչ մեծության խորանարդ ե:

Կիորը կամ խոր. դեցիսետրը դրեք կշեռքի նժարին և լիքը լցրեք մա-  
քուր թորած ջրով, վարուան կիսի ջրի քաշը: Այս, 1 կ գ:

Նույն ձեռվ պատրաստեցեք 1 խոր. սանտիմետր և լցրեք մաքուր ջ-  
րով: Վարքան կիսի ալդքաս ջրի քաշը: Այս, 1 գ:

55. Պատրաստեցեք տախտակից 1 խոր. մետր, Ցեթե հնարավոր լի-  
ներ լցնել դա մաքուր թորած ջրով, վարքան կլինել ջրի քաշը, հիշեցեք:

56. Մեկ տոննը քանի կիլոգրամ ետ
1 տոննը քանի լիտր ջուր և պարունակում:
1 խոր. մետրը = 1000 խոր. . . .
1 տոննը = 1000 խոր. . . .
1 լիտրը = 1000 խոր. . . .
1 կիլոգրամը = 1000 . . .

### ՄԵԿ ԽՈՐԱՆԱՐԴ ՄԵՏՐԻ ՔԱՇԸ

Չոր ավագ . . . . .	1 մ 500 կ գ
Կավ . . . . .	1 մ 700 կ գ
Չոր. (չսղմած) . .	100 կ գ
Սառուց . . . . .	505 կ գ

57. ա) Քանի սայլով կարելի կլինի 1 խոր. մետր չոր ավագը տեղո-  
փոխել, յեթե սալը կրում է 500 կ գ ծանրություն:

բ) Մի տեղից կավ հանեցին և սայլով կրեցին, տուաջացավ փոս, վորի  
խորությունը, լայնությունը և յերկարությունը մի—մի մետր եր, վերջին  
անգամ վորքան կավ բարձան, յեթե սայլի լրիվ բեռնափորումը 510 կ գ եր:

58. Դասարանի բարձրությունը 3 մ 5 դմ ե, լայնությունը՝ 5 մ, իսկ  
յերկարությունը 8 մ: Քանի աշակերտի յի հարմար ալդ դասարանը, յեթե  
ուռաքանչուուրին անհրաժեշտ ե 7 խոր. մետր ոդ:

59. Վերածեցեք կիլոգրամի՝ 24 մ, 9 մ 250 կ գ, 36 մ 400 կ գ:  
Վերածեցեք գրամի՝ 12 կ գ 200 գ, 8 կ գ, 750 գ:  
 $\frac{1}{2}$  կ գ  $1\frac{3}{4}$  կ գ,  $2\frac{2}{5}$  կ գ.

60. Անդրադարձրեք տոննի՝ 18000 կ գ, 60000 կ գ, 25000 կ գ:  
Անդրադարձրեք կիլոգրամի 2000 գ, 3800 գ, 4500 գ:

### 1000 ՄԻԼԻՈՆ 1 ՄԻԼԻԱՐԴ Ե

61. Թվանշաններով գրեցեք 1000 միլիոն կամ 1 միլիարդ: Քանի  
թվանշան գործածեցիք: Աջից հաշված վար կարգում և գրվում միավոր-մի-  
լիարդները:  
Թվանշաններով գրեցեք 4 միլիարդ, 7 միլիարդ:

62. Թվանշաններով գրեցեք 16 միլիարդ: Քանի թվանշանով արտա-  
հայտեցիք զա: Աջից հաշված վար կարգում և գրվում տասնյակ միլիարդ-  
ները:

Թվանշաններով գրեցեք 24, 32, 45, 60 միլիարդ:

63. Թվանշաններով գրեցեք 128 միլիարդ: Քանի թվանշանով ար-  
տահայտեցիք զա:

Աջից հաշված վար կարգում և գրվում հարյուրյակ միլիարդները:  
Թվանշաններով գրեցեք՝ 112, 205, 276 միլիարդ:

64. Քանի միլիոն ե 7, 14, 23, 56, 180, 238 միլիարդ:  
Քանի միլիոն ե 4000, 32000, 156000 միլիոնը:

65. Ի՞նչ բարձրության սյուն կստացվեր, յեթե խոր, մետրը կտր-  
անին խոր. միլիմետրների և շարեյին իրար վրա:

66. Մուկվալի շրջանում կան ճահիճներ, ճշակության համար գեռեա  
անպատճառ 71584 հա, իսկ արդեն պատրաստ՝ 14982 հա: Վորքան և առ-  
ֆի պաշարը այնտեղ, յեթե տորֆի միջին հաստությունը 2 մետր ե:

67. Տորֆի շերտն այստեղ տարեկան ավելացնում—հաստանում ե 5 մմ:  
Տարեկան վարքան և ավելացնում տորֆի պաշարը 86566 հա տարածու-  
թյան ճահիճներում:



ԽՍՀՄ ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՅՆԵՐԸ

68. Խ. Միության ծովային տրանսպորտը.

(Հաղար տոնն.)

Վեց ծովը	Ներմուծում		Արտածում	
	1913 թ. թիվ	1927/28 թիվ	1913 թ. թիվ	1927/28 թիվ
Ավիտակ և Հյուսիս.				
սառուց . . .	128	283	1506	1306
Բալտիկ . . .	4008	416	2648	1178
Աև և Ալով . . .	889	405	10861	4075
Կասպից . . .	103	90	121	114
Խաղաղ ովկ . . .	377	140	423	2005
Հնդամենը	5505	1340	15559	8678

Հաշվեցեք ցարական Ռուսաստանի և Խորհրդային Միության ներմուծման և արտածման փոխհարաբերությունը համաձայն վերևի աղյուսակի:

69. Միջի 1914 թ. պատերազմը Ռուսաստանն ուներ ծովերում 810,000 տ և Կասպից ծովում 360,000 տ տարողության առևարական նավեր, Պատերազմի ընթացքում նա կորցրեց այդ նավերի  $\frac{2}{5}$  մասը ծովերում և 220,000 տ տարողության Կասպից ծովում: Ինչ տարողության առևարական նավեր մնացին Ռուսաստանում:

70. Խորհրդ. Միության գլխավոր նավահանգիստները և նրանց ապրանքափոխագրումը:

(Հաղար տոնն.)

Նավահանգիստ	1913 թ. թիվ	1927/28 թիվ	Ինչ ապրանք	Ներմուծել և թե արտածել
Արևմանդելուկ . . .	1288	1278	Փայտեղեն	Արտահանել
Մուրմանսկ . . .	—	283	Բամբակ	Ներմուծել
Լենինգրադ . . .	6910	1709	Փայտեղեն	Արտահանել
Ոդեսա . . .	4083	844	Հացահատիկ	»
Նովորոսսիյուկ . . .	1942	1597	Հացահատիկ	»
Բաթում . . .	1510	2155	Նավթ, բեմոնտ	»
Վլադիվաստոկ . . .	1444	2359	Փայտեղեն	»
Բագու . . .	5658	4307	Նավթ	—
			(Աստրական)	

Այդ նավահանգիստներում վորքան և յեղել փայտեղենի և նավթի արտածումը և արտահանվող միուս նյութերի վեր մասը կազմել:

Շահնոթություն—Նովորոսիյուկի արտահանածի  $\frac{1}{3}$  մասը հաշվեցեք նավթ:

71. 1928 թ. Խ. Միության գետերով քեռ փոխադրվեց:

Վոլգայով և վտակներով	16,652,000 տ
Նեսայով . . .	6,188,000 տ
Դնիապով . . .	2,760,000 տ
Սիբիրի գետերով . . .	3,119,000 տ
Հյուս. Դվինայով . . .	4,321,000 տ

Հաշվեցեք:

ա) Հիշված գետերի բեռների փոխադրության վեր մասը միայն Վոլգայով կառարվեց:

բ) Առանց գրավոր հաշվի, թվերին նախելով ասացեք, մոտավորապես քանի անգամ վոլգան 28 թ. ավելի փոխադրեց, քան Սիբիրի բոլոր նավարկելի գետերը:

72. Համեմատեցեք ծովային և գետային տրանսպորտը և հաշվեցեք, թե քանի անգամ առաջինը մեծ է յեղել յերկրորդից:

73. 1928 թ. Անդրկովկասան նավահանգիստներում ապրանքափոխագրման շրջանառությունը յեղել է 7,077,059 տ:

Քանի անգամ Ռուսաստանի գետային տրանսպորտը մեծ է յեղել Անդրկովկասի ապրանքափոխադրումից:

74. Յերկաթաղային ցանցը զանազան յերկրներում էղել է.

(Կիւմետր)

Վոր յերկիրը	1900 թ.	1927 թ.
Արևմտ. Յեվրոպա	222,000	327,900
Միացյալ Նահանգներ	311,100	402,400
Ռուսաստան. ԽՍՀՄ	53,900	75,700
Մյուս յերկրները	211,100	427,500
Հնդամենը	798,200	1,233,500

Կազմեցեք խնդիրներ:

75. Բեռների փոխադրությունը յերկաթաղային ցանցի մեջ և Խ. Միության մոջի:

1913 թ. 1930 թ.

Հացահատիկ . . .	18,100,000 տ.	16,300,000 տ
Աղ . . .	1,900,000 տ	—
Մետաղ . . .	4,500,000 տ	8,000,000 տ
Բա ածուխ . . .	23,300,000 տ	42,200,000 տ
Նավթալիքն մթեր . . .	5,800,000 տ	10,500,000 տ
Փայտեղեն . . .	21,000,000 տ	45,500,000 տ
Այլ . . .	56,800,000 տ	91,900,000 տ

Համեմատեցնք յերկաթուղարք փոխադրած բեռների ծանրությունը՝ 1913-  
1930 թվերին:

76. Հնգամլա պլանով նախագծված եր 1927/28 թ. 150,600,000 տ,  
բայ 1932/33 թ. 281,600,000 տ բեռների փոխադրում, սակայն 1930/31  
թվին կփոխադրվի այնքան քեզ, վարքան նախատեսնված եր հնգամլակի-  
վերջին տարվա համար:

Տարեցտարի ինչ թափով պետք է մեծանալ յերկաթուղարք փոխադրու-  
գաղ բեռների չափը և ինչ թափով և մեծացնել դա իրապես:

77. Հնգամլա պլանով վորոշված և կառուցել 26,600 կմ յերկաթզիծ-  
թափով քանի տարում կարելի կիրակ կառուցել այնքան յերկաթզիծ,  
քայ համապարփի ցարական Ռուսաստանի ամբողջ յերկաթզիծին:

ԾԱՆՈՒԹՅՈՒԹՅՈՒՆ. — 8. Ռուսաստանի յերկաթզիծի յերկարությունը՝  
1914 թ. պատերազմից հետո 58700 կմ. եր.

78. Այս հնգամյակում Անդրկովկասում կառուցվելու ին Սև ծովի և  
բազու—Զուլֆա յերկաթզիծի շարունակությունը. Սև ծովինը 171 կմ, իսկ  
բազու—Զուլֆային՝ 149 կմ: Դրանց համար պահանջվում է 78 միլիոն տո-  
ննչ և նստելու 1 կմ յերկաթզիծի կառուցումը:

79. Անդրկովկասում մոտիկ տպագայում կառուցվելու ին հետեւալ  
յերկաթուղարփին գծերը.

Եեվլախ—Ստեփանակերտ	Այս գծերի ընդհանուր յերկարությունը լինելու յի 472 կմ, 41 միլիոն ո. արժեքիտ
Մարդարաբատ—Սառիջալար	
Ազստափա—Իջևան	
Դորի—Ճիխնվալի	
Եեվլախ—Նուխի	

Պարզեցնք. ա) Մոտիկ տարիներս ընդամենը քանի կիլոմետր յերկաթ-  
զիծ և կառուցվելու Անդրկովկասում (տես նախորդ խնդիրը).

բ) Վորքան ծախս և նուտելու ամբողջ գծի և 1 կմ-ի կառուցումը:

80. Անդրկովկասի մի քանի բանուկ խճուղիները.

Խճուղիների կետերը	Քանի կիլո- մետր
Եեվլախ—Ստեփանակերտ . . .	100
» — Նուխի . . . . .	70
» — Նուխի—Ցոռիս Մղալի . . .	120
Նուխի—Ճնորիս Մղալի . . .	190
Ղուրա—Խաչմագ . . . . .	35
Դորի—Ճիխնվալի . . . . .	41
Եեվլախ—Եելենովկա . . . .	97
Ղաբարիլսա—Դիլիջան—Ազ- տափա . . . .	114

Յեթե այս բոլոր խճուղիներով յերկաթուղի անցկացվի, վորքան կնառի  
պատուցումը (տես նախորդ խնդիրը):

81. 1914 թ. պատերազմից առաջ Յեկրոպական Ռուսաստանում կար  
35,800 կմ խճուղարին ճանապարհ, մինչդեռ Արևմտ. Յեկրոպայի 9 խոշո  
ղեառություններում խճուղիների յերկարությունը 1,441,000 կմ էր:

Յեթե այդ պետությունների խճուղիների յերկարությունը համարենց  
հավասար, այդ գեպքում Յեկրոպ. Ռուսաստանի խճուղիները քանի անդամ  
պակաս են յեղել այդ պետություններից լուրացանչուրի խճուղիներից:

82. 1 տ բեռի փոխադրությունը հողի ճանապարհով 1 կիլոմետրին  
նառաւ և 44 կոպ, խճուղով 9 կոպ.:

600 տ բեռը 100 կմ հողի ճանապարհով և խճուղով փոխադրելն ինչ  
ժամանակամատ:

83. Հողի ճանապարհների և խճուղու կառուցումը և. Ռուսաստանում:

(Կիլոմետր)

Խճուղիների ճանապարհ	1927—28 թ.		1932—33 թ.	
	Քարած	հողի	Քարած	հողի
Գետական նշանա- կություն ունեցող	13809	17990	23546	11366
Տեղական նշանա- կություն ունեցող	11688	232704	16568	236068

ա) Հնգամյակի վերջում քանի կիլոմետրով կավելանա պետ, նշանա-  
կություն ունեցող քարած ճանապարհները:

բ) Հնգամյակի վերջին տարեկան միջին հավաք վորքմն ընդարձակ-  
ված կլինի հողի և քարած ճանապարհները (պետական և անդական արժեկը  
ունեցող ճանապարհները միասին):

84. Անդրկովկասում կա 19000 կմ խճուղի և սոյլուղի: 1931 թ. ավե-  
լանալու լի 533 կմ են և վերանորոգվելու յեն հին ճանապարհները, վորքը  
ժողովրդական տնտեսությունը կշահի 25 միլիոն ո. ինչ ոգուա և բերելու  
1 կմ կանոնավորված ճանապարհը:


85. 1930 թ. ավատանսպորտն Ադրբեյջանում կատարվում եր 8  
գծով՝ 626 կմ, Վրաստանում 21 գծով՝ 1425 կմ և Հայաստանում 14 գծով՝  
793 կմ յերկարության:

Համաձայն հնգամյա պլանի, Ագրբեջանում գծերի թիվը պետք է հաս-  
նի 30-ի՝ 1893 կմ, Վրաստանում 38 գծով՝ 2719 կմ և Հայաստանում 32 գծով՝  
2412 կմ յերկարության:

Հնգամյակում վորքմն կավելանա գծերի յերկարությունը Անդրկով-  
կասում 3 հանրապետություններում:


ԶՈՒԳԱՀԵՌԱԿՈՂՄԻ ՄԱԿԵՐԵՍԻ ԶԱՓՈՒՄԸ

86. Թղթից կարեցեք զուգահեռակողմ ներքեւի գծագրի մեծությամբ:



Նկ. 2. Հիմք


Այժմ գծագրեցեք մի ուղղանկյուն, վորի հիմքը և բարձրությունը պահպանեռակողմի հիմքին ու բարձրությանը հավասար, այսպիսու:




Նկ. 3.

Հնարավնը եւ, արդիոք, զուգահեռակողմի վորոշ հատվածը կտրելով՝ մյուսին միացնելով ստանալ այսպիսի ուղղանկյուն:

Այս, պետք ե զուգահեռակողմի Բ զագաթից ուղղահայց իջեցնել զուգահեռակողմի հակադիր կողմին, այդ ուղղահայցը միաժամանակ կլինի զուգահեռակողմի բարձրությունը, ահա այդ ուղղությամբ ել կարեցեք հատվածը կստացվի այսպիսի ձև:




Նկ. 4.



Նկ. 5.

Նկ. 6.

ԱԲԵ հատվածը միացրեք նույն զուգահեռակողմին հակառակ կողմից, կստացվի ներքեւի ձևը:



Նկ. 7.

87. Զարեցեք զուգահեռակողմի հիմքն ու բարձրությունը և համեմատեցեք ուղղանկյան հիմքի ու բարձրության հետ, համատեղվում են, թե զուգակորենն, հավասար են միմյանց, թե անհավասար:

Այլքեն, ինչք յե հավասար զուգահեռակողմի մակերեսը:

Այս, հիմքի բարձրության արտադրյալն, ինչպես ուղղանկյան մակերեսը:

88. Թղթից կտրեցեք միենույն հիմքն ու բարձրությունն ունեցող զուգահեռակողմ և ուղղանկյուն: Այդ լերկուսի մակերեսը հավասար ե, թե վոչ:

Դրաք իրար վրա, կհամատեղվեն, թի՞ վոչ:


Այդ գծագիրները, վոր մակերեսով հավասար են, բայց չեն համատեղվում, կոչվում են հավասարամեծ:

Կարելի՞ յե ամեն գեպքում ուղղանկյունը դարձնել հավասարամեծ զուգահեռակողմ և ընդհակառակը:

89. Բարակ տախտակից պատրաստեցեք ուղղանկյուն շրջանակ, վորին ուղած ժամանակ կարելի լինի տալ զուգահեռակողմի ձև և ընդհակառակը:

### ՃԵՂԱՆԿՅՈՒՆ ՅԵՎ ՆՐԱ ՄԱԿԵՐԵՍԸ

90. Դժաղրեցեք մի այնպիսի զուգահեռակողմ, վորի բոլոր կողմերը հավասար լինեն:



Նկ. 8. ՃԵՂԱՆԿՅՈՒՆ

ՃԵՂԱՆԿՅՈՒՆ մակերեսը վորպիս զուգահեռակողմի մի անունին, նույնական է ավասար ե հիմքի և բարձրության արտադրյալին, ինչնու:

## ՏԱՄԱՐԴԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԿՆԵՐ

ԹՎԱՐԿՈՒԹՅՈՒՆ


**91.** Թղթից կտրեցեք շեղանկյուն։ Պրա մի կողմից կտրելով և մյուսին միացնելով կստանանք մի ծանոթ ձև, վմբն և դա։

Ինչի՞ է հավասար քառակուսու մակերեսը։

**92.** Տախտակա ձողերից պատրաստեցեք քառակուսի, առա աջին գրան շեղանկյան ձև և ընդհակառակը։

**ԵԵՌԱՆԿԱԱՆ ՄԱԿԵՐԵՍԻ ԶԱՓՈԽԸԸ**

**93.** Գծագրեցեք վորեա յեռանկյուն, ասենք թե ներքեն։



Նկ. 9.

Բ գագաթից Ա.Դ. հիմքին իջեցրած ե ուղղահալաց ԲԵ, վորը հանդիսաւում ե յեռանկյան բարձրությունը։ Բ կետից զուգահեռ անցկացնենք Ա.Դ.-ին և Դ կետից՝ Ա.Բ.-ին։ Այդ նոր գծերը կհանդիպն Դ կետում։

Ստացվեց զուգահեռակողմ կամ շեղանկյուն, վորոնց մակերեսը հավասար ե իրենց հիմքի և բարձրության արտագրալին։


Բայց քանի վոր Ա.ԲԴ յեռանկյունը զուգահեռակողմի կամ շեղանկյան կեմն ե մրախն, ուստի և յեռանկյան մակերեսն ել հավասար կլինի հիմքի և բարձրության արտագրալի կեմին։

**94.** Թղթից կտրեցեք շեղանկյուն և ծալեցեք ալնպես, վոր ստանանք լերկու իրար հավասար յեռանկյուն։ Սրանցից յուրաքանչյուրի մակերեսը շեղանկյան մակերեսի վմբ մասը կլինի։


**95.** Թղթից կտրեցեք զուգահեռակողմ և ծալեցեք ալնպես, վոր ստանաք լերկու իրար հավասար յեռանկյուն։ Սրանցից յուրաքանչյուրի մակերեսը զուգահեռակողմի մակերեսի վմբ մասը կլինի։

**96.** Եկկերի միջոցով գետնի վրա գծեցեք քառակուսի ծ մ կողմով։ Դրան տիեզ շեղանկյան ձև, գծեցեք բարձրությունը։ Այդ շեղանկյունը կիսեցեք յերկու յեռանկյան։

**97.** Նույն աշխատանքը կատարեցեք զուգահեռակողմի նկատմամբ։



Նկ. 10.



Նկ. 11.

Հարյուրա- վոր	Տասնա- վոր	Միավոր	Տասներոր- դական	Հարյուրի- րորդական	Հազարի- րորդական
		6	2		= 6,2
5	8		4	7	= 58,07
				6	= 0,487

**98. Ամբողջ թվերից հետո**

Վոր աեղում են գրվում տասնորդական մասերը

» » » հարյուրերորդական »

» » » հազարերորդական »

Թանիք անգամ տասնորդական մասերը մեծ են հարյուրերորդականից։ Թանիք անգամ հարյուրերորդական մասերը մեծ են հազարերորդականից։

Ամբողջ թվերը տասնորդական մասերից ինչ նշանով են բաժանվում։ Եերբ ամբողջ թիվ չկա, ինչ են գրում տասնորդական մասերից առաջ։

**99. Մեարի վմբ մասն ե 1 ոմ։**

» » » 5 ոմ, 8 ոմ։

25 սանտիմետրը մեարի վմբ մասն ե։ Գրեցնեք դա տասնորդական կուռքակով։

48 կոպեկը ոռուրու քանիք հարյուրերորդ մասն ե, գրեցնեք դա տասնորդական կուռքակով։

**100. Վերածեցեք.**

ա) 1 գմ 5 սմ՝ սանտիմետրների 1 տասնորդական 5 հարյուրերորդականը՝ հարյուրերորդականի։

բ) 5 գմ 8 սմ՝ սանտիմետրների

5 տասնորդական 8 հարյուրերորդականը՝ հարյուրերորդականի։

գ) 1 մ 3 գմ 9 սմ՝ արտահայտեցնեք տասնորդական կոտորակով։

**101. Արտահայտեցնեք տասնորդական կոտորակով.**

$$1 \text{ մ } 4 \text{ դմ} = 1,4 \text{ մ} \quad 3 \text{ մ } 2 \text{ դմ } 5 \text{ սմ} = \text{մ}$$

$$7 \text{ դմ } 3 \text{ սմ} = 0,73 \text{ մ} \quad 1 \text{ մ } 7 \text{ դմ } 3 \text{ սմ} = \text{մ}$$

$$5 \text{ մ } 5 \text{ դմ} = \text{մ} \quad 5 \text{ դմ } 2 \text{ սմ} = \text{դմ}$$

$$12 \text{ մ } 6 \text{ դմ} = \text{մ} \quad 7 \text{ սմ} = \text{դմ}$$

$$5 \text{ ս. } 60 \text{ կոպ.} = \text{ս.} \quad 12 \text{ ս. } 10 \text{ կոպ.} = \text{ս.}$$

$$3 \text{ ս. } 70 \text{ կ.} = \text{ս.} \quad 54 \text{ ս. } 30 \text{ կ.} = \text{ս.}$$

$$25 \text{ ս. } 40 \text{ կ.} = \text{ս.} \quad 1 \text{ ս. } 20 \text{ կ.} = \text{ս.}$$

$$18 \text{ ս. } 80 \text{ կ.} = \text{ս.} \quad 74 \text{ ս. } 50 \text{ կ.} = \text{ս.}$$

**102. Արտահայտեցեք բարդ անվանական թվերով.**

2,4 ո.	12,8 ո.
3,5 ո.	64,07 ո.
2,35 ո.	51,63 ո.
4,25 ո.	90,09 ո.

**103. Ուրիշ ձեռք ինչպես կարելի յե զրել**

0,25 ո.	0,06 ո.
0,38 ո.	0,18 ո.
0,05 ո.	0,15 ո.
0,28 ո.	0,54 ո.

**104. Կորդացեք հետևյալ տասնորդական կոտորակները**

3,5	6,12	0,453
9,6	1,74	7,001
0,3	15,4	1,324
0,8	32,32	0,405

**105. Վորն և ավելի մեծ.**

0,1 մ	թթ	0,10 մ
0,5 մ	դ	0,50 մ
0,8 կգ	դ	6,800 կգ
0,3 կգ	դ	0,300 կգ

Մառագեց չափելով:

**106. Կրճատեցեք հետևյալ տասնորդական կոտորակները.**

0,30	6,030	0,60
0,70	1,400	8,190
2,80	0,070	2,250
4,150	5,195	3,010

**107. Համեմատեցեք ներքեմի կոտորակները և ասացնեք, վորանք ան-**

իբար հավասար.

3,1	6,106	1,200	8,050
3,01	6,016	1,2	8,500
3,20	6,160	1,020	8,50
3,020	6,16	1,002	8,05

ՏԱՄՆՈՐԴԱԿԱՆ ԿՈՏԵՐԱԿԻՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՈՒՄՆ ՈՒ ՀԱՆՈՒՄԸ

**108. Անվանական թվերը դարձրեք տասնորդական կոտորակի և հա-**

մապատասխան մասերն իրար տակ գրելով գուալերեցեք.

3 դմ + 5 դմ	4 սմ + 3 սմ
0,4 մ + 0,2 մ	0,04 մ + 0,03 մ
7 դմ + 2 դմ	5 սմ + 2 սմ
0,6 մ + 0,5 մ	0,05 մ + 0,02 մ
1 մ 5 դմ + 3 դմ	2 մ 6 դմ + 1 մ 4 դմ
1,5 մ + 0,3 մ	2,6 մ + 1,4 մ
1 մ 5 դմ + 5 դմ	5 մ 4 դմ + 2 մ 4 դմ
1,5 մ + 0,5 մ	5,4 մ + 2,4 մ

**109. Հաշվեցեք զրագոր.**

2,1 + 4,7	2,12 + 3,36	0,25 + 0,496
0,8 + 1,5	0,27 + 3,12	3,175 + 4,8
6,4 + 0,7	3,53 + 7,43	1,83 + 0,108
2,12 + 3,36	25,01 + 9,45	0,625 + 0,375

**110. Կատարեցեք հանձնան գործողություն, նախապես անվանական թվերը դարձնելով տասնորդական կոտորակ.**

1 մ — 6 դմ	8 դմ — 5 սմ
1 մ — 0,6 դմ	0,8 մ — 0,05 մ
2 մ 3 դմ — 5 դմ	2 դմ — 9 սմ
2,3 մ — 0,5 մ	0,2 մ — 0,09 մ
3 մ — 6 դմ	8 մ 2 դմ — 2 մ 5 դմ
3 մ — 0,6 մ	8,2 — 2,5
4 մ — 2 մ 5 դմ	6 մ 4 դմ — 1 մ 7 դմ
4 մ — 2,5 մ	6,4 — 1,7

**111. Հաշվեցեք.**

3,2 — 1	0,8 — 0,3	17,64 — 4,48
7,25 — 5	8,5 — 0,4	9 — 0,25
12,36 — 8	0,42 — 0,22	12 — 4,45
0,6 — 0,5	0,52 — 0,43	6 — 2,3

1,5 — 0,6	19,02 — 7	7,48 — 5,024
4,3 — 0,9	21,06 — 9	1,141 — 0,35
16,7 — 1,8	0,64 — 0,19	27,15 — 8,138
6,4 — 5	14,5 — 0,38	2,375 — 1,508

ՀԱՅՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՑՆԵՐԸ

**112. Պոստալին առաքումները Խորհրդակին Միության մեջ.**  
(Միլիոն)

Առաքման նլութը	1928 թ.	1929 թ.	1930 թ.	1931 թ.
Նամակներ ու բա- ցիկներ	579,8	658,9	946,9	1250,0
Փաթեթներ	56,9	76,1	114,3	180,0
Ապահովագր. նամակ	48,0	54,9	75,4	92,0
Դրամական փոխադր	36,8	37,6	42,0	50,0
Կաղողներ	13,6	17,2	24,2	32,0
Պարբերական հրատ.	847,2	1332,4	2695,0	4700,0
Լրացրելի առաքում	2,10	2,71	4,02	5,4

Հաշվեցեք յուրաքանչյուր թվականի առաքումների գումարը:  
Համեմատեցեք 1928 թ. և 1931 թ. առաքումների չափի առբարեռությունը: Առանով ի՞նչ և պարզվում:

113. Պատով առաքումներ անելիս պետք է կդ քաշ ունեցաղ իրք համար վճարել.

Մինչև 100 կմ հեռավորությունը 5 կոպ

100 — 150	»	5	5,5	»
150 — 200	»	»	6	»
200 — 300	»	»	7	»
300 — 400	»	»	9	»
400 — 500	»	»	11	»
500 — 600	»	»	13	»
600 — 700	»	»	15	»
700 — 800	»	»	17	»
800 — 900	»	»	19	»

Վեր իրի առաքման ծախոն ավելի կլինի, 3 կդ քաշ ունեցողը 800 կմ  
թե 12 կդ 500 կմ հեռավորության վայր ուղարկելը:

114. Ասենք թե պետք է ուղարկել այսպիսի հեռագիր—կենքնական ացկուլութիւն համագումարը նշանակվեց վեցին օրակարգում իւս ձեր հաշվետու զեկուցումը Մինասյան:

Հեռագրի յուրաքանչյուր բառին վճարվում է 7 կոպ., բայց այդ 15 կոպ. վերագիր ծախոն, 5 կոպիկ եւ անդորրագրին:

Վճարքան պետք է վճարել այդ հեռագրի համար:

115. Ի. Միության մեջ հեռախոսային փոխանակում յեղել ե.

	Վորքան	1929 թ.	1930 թ.	1931 թ.
Տեղական հեռախոս ցանցի վճարովի բաժանումներ	հաղար	251,2	307,5	399,5
Միջքաղաքային հեռախոսային զըսւցներ	միլիոն	17,53	25,84	41,8

Ի՞նչ թափով և զարգացել հեռախոսային փոխանակությունը առարկա ապրի:

116. Խ. Միության միջքաղաքային հեռախոսային բարեկարգությունը յեղել ե.

1929 թ. . . . 946,2 միլիոն կիլոմետր

1930 թ. . . . 1110,3 » »

1931 թ. կլինի 1480,1 » »

